

ՀՀ Վայոց ձորի մարզպետը մասնակցել է Բերձոր քաղաքի ազատագրման 21-րդ տարեդարձին նվիրված տոնական միջոցառումներին

20.05.2013



Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը մայիսի 18-ին մասնակցել է Բերձոր քաղաքի ազատագրման 21-րդ տարեդարձին նվիրված տոնական միջոցառումներին:

Երկրի ղեկավարը ծաղկեպսակ է դրել Արցախյան ազատամարտում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշահամալիրում եւ պետական պարգևներ ու արժեքավոր նվերներ հանձնել մի խումբ անձանց:

Իր խոսքում Նախագահ Սահակյանը Բերձորի ազատագրումը բնութագրել է որպես կարևոր ռազմական, քաղաքական եւ հոգեբանական հաղթանակ, որը ճեղքեց մոտ 70 տարի տևած Արցախի շրջափակումը՝ հավելելով, որ առանց դրա անհնարին կլիներ պաշտպանել մեր հայրենիքի անկախությունն ու ազատությունը եւ կայուն հիմքեր ստեղծել նրա հուսալի զարգացման ու զորացման համար:

Երկրի ղեկավարն ընդգծել է, որ Քաշաթաղի շրջանի զարգացումը այսուհետ կլինի իշխանությունների մշտական ուշադրության կենտրոնում եւ մոտակա տարիներին այստեղ կիրականացվեն մի շարք խոշոր ծրագրեր:

Միջոցառումներին մասնակցում էին Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, վարչապետ Արա Հարությունյանը, պաշտոնատար այլ անձինք, ՀՀ ԱԺ մի խումբ պատգամավորներ, ՀՀ Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերի ղեկավարները, հյուրեր Հայաստանից եւ Սփյուռքից:

Աղբյուրը՝ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմ